ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 19/98733 «10» 08 2021թ.

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>-ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
/Ք.Երևան Փավստոս Բուզանդի փողոցի հ.1/3 շենք , 4-րդ հարկ/

Ի պատասխան Ձեր 04.08.2021թ. հ.262430 էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ներկայացված հարցման (որը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ մուտքագրվել է 04.08.2021թ. հ.21/98733 թվագրմամբ) տեղեկացնում եմ, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի պետի կողմից Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին հասցեագրված 29.07.2021թ. հ.եա-4631/02 գրությամբ Երևանի քաղաքապետարան է ուղարկվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշումը՝ պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին, համաձայն որի որոշվել է՝ <<Ի կատարումն ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021 թվականի տրված կատարողական թերթի՝ արգելել Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդում և/կամ ապամոնտաժումը>> (պատճենները կցվում են):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ հիշյալ հասցեում գործող քարի արտադրամասի գործունեությունը դադարեցնելու առումով՝ Երևանի քաղաքապետարանը լիազորություն չունի:

Առդիր 4 թերթ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ռ.ԴԱՐԲԻՆՅԱՆ**

Կատարող՝ Ա.Սիմոնյան
հեռ.011 514-001(564)

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ, ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԵՎ ԷՐԵԲՈՒՆԻ-ՆՈՒԲԱՐԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

0078, Երևան, Հալաբյան 41ա, Հեռ. /060/ 713-467

№ ՀԱ 4631/02
19 / 07 /2021թ

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Դ.Համբարյանին
/ք. Երևան, Արգիշտի 1/

Հարգելի պարոն Համբարյան

Ուղարկվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի կայացրած որոշումը՝ պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին:

Անհրաժեշտ է կատարել որոշմամբ սահմանված պահանջը և արդյունքների մասին հայտնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնին:

Միաժամանակ հայտնվում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» << օրենքի 71 հոդվածի՝ հարկադիր կատարողի իր իրավասության սահմաններում կայացրած որոշումները պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Առդիր որոշումը և թիվ **ՎԴ/5941/05/21** կատարողական թերթի պատճենը «1» թերթից:

Հարգանքով՝

ԲԱԺՆԻ ՊԵՏ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

կատարող Մ.Միքաելյան
հեռ. 060-713-468 (ներքին 00312)
կ/վ 07924750

2099377

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
№ 9/8465/-02-08 2021 թ.

ՈՐՈՇՈՒՄ

Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին

29.07.2021թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Մարինե Միքաելյանս ուսումնասիրելով 29.07.2021թ. հարուցված թիվ 07924750 կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժին է մուտքագրվել ՀՀ Վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021 թվականին տրված կատարողական թերթը, համաձայն որի պետք է՝ **արգելել Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը:**

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5, 28, 28.1, 62 և 71 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Ի կատարումն ՀՀ Վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021 թվականին տրված կատարողական թերթի՝ **արգելել Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը:**

Որոշումն ենթակա է անհապաղ կատարման:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածի համաձայն՝ քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում հարկադիր կատարողն իրավունք ունի կիրառելու օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով, որոշումը ստանալուց հետո երկամսյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող
արդարադատության կապիտան **Մ.Միքաելյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Կենտրոն ,Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժին

ք.Երևան,0078, Հալաբյան 41ա,հեռ. 060713468

Երևան Քաղաքապետարան
ք.Երևան, Կենտրոն, Արգիշտի 1

Մեր 4631/02
29.07-21թ.

ՈՐՈՇՈՒՄ

Կատարողական վարույթ հարուցելու մասին

«29» հուլիս 2021թ.

ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Կենտրոն ,Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժին, ավագ հարկադիր կատարող արդարադատության կապիտան Մարինե Միքաելյանս ուսումնասիրելով Միքայել Սերգեյի Ղազարյանից «29» հուլիս 2021թ. ստացված թիվ Կ/թ S15040 դիմումը կատարողական վարույթ հարուցելու մասին

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Վարչական դատարան-ի կողմից «28» հուլիս 2021թ. տրված թիվ ՎԴ/5941/05/21 կատարողական թերթի համաձայն պետք է արգելել Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 30, 44-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Հարուցել կատարողական վարույթ թիվ 07924750, արգելել Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ավագ հարկադիր կատարող արդարադատության կապիտան Մարինե Միքաելյան

ստորագրություն՝

Ծանուցում. *«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով* նախատեսված գույքի վրա դրված արգելանքի կամ հահմանափակման մասին ծանուցումը ուղարկվում է Ձեր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ դրա բացակայության դեպքում արգելանքի կամ դիմումի համաձայն կարող է ուղարկվել դիմումով մատնանշված էլեկտրոնային

Հայաստանի Հանրապետություն

Վարչական դատարան

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ

Գործ № ՎԴ/5941/05/21

<< 28 >> Հուլիս 2021 թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝ դատավոր Մ.Մելքումյան, քննության առնելով ըստ հայցի Միքայել Ղազարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով հայցվորի կողմից ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը.

<< 28 >> Հուլիս 2021 թ.

ՈՐՈՇԵՑ

Հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին, բավարարել:
Արգելել Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը:

ՊԱՀԱՆՋԱՏԵՐ

Միքայել Սերգեյի Ղազարյան
Բնակության՝ ք.Երևան, Մազմանյան 10 շենք, բն. 26
Անձնագիր՝ 001346683 տրված 27.12.2012 թվականին 012-ի կողմից

ՊԱՐՏԱՊԱՆ

Երևանի քաղաքապետարան
Գործունեության՝ ք.Երևան, Արգիշտիի 1

Կատարողական թերթը տրվել է առանց դիմումի

Կատարողական թերթը տրված է << 28 >> Հուլիս 2021 թ.

Կատ. թերթը ենթակա է անհապաղ կատարման

Որոշումն օրինական ուժի մեջ է մտել << 28 >> Հուլիս 2021 թ.

Դատավոր՝ Միքայել Մելքումյան

Digitally signed by
MELKUMYAN
MIKAYEL
1112830917
Date: 2021.07.28